

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն թիվ 3

2011թ. մայիսի 11-ին կայացած Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության
ֆակուլտետի խորհրդի նիստի

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. «ԵՊՀ լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության մրցույթին ներկայացվող
ուսանողների թեկնածությունների ընտրությունը:

/Ձեկ. դեկան Մ.Գրիգորյան/

2. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՍԵՑԻՆ** - Ֆակուլտետի դեկան Մ.Գրիգորյանի հաղորդումը «ԵՊՀ լավագույն ուսանող» ամենամյա
մրցանակաբաշխության մրցույթին ներկայացվող ուսանողների վերաբերյալ: Նշվեց, որ
ֆակուլտետի Ուսանողական խորհուրդը առաջարկել է ներքոհիշյալ ուսանողներին
ներկայացնել մրցանակաբաշխության մրցույթին մասնակցելու համար:

- 1. Ադամյան Ինգա Արծրունի - երկրաբանության բաժին, մագիստրատուրա 1-ին կուրս,
- 2. Վարդանյան Էլմիրա Արմենի - աշխարհագրության բաժին, մագիստրատուրա 1-ին
կուրս,
- 3. Բարսեղյան Լուսինե Ավետիքի – քարտեզագրության և կադաստրային գործի բաժին, 3-
րդ կուրս:

ՈՐՈՇԵՑԻՆ – «ԵՊՀ լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության մրցույթին մասնակցելու
համար ներկայացնել ֆակուլտետի հետևյալ ուսանողներին.

- 1. Ադամյան Ինգա Արծրունի - երկրաբանության բաժին, մագիստրատուրա 1-ին կուրս,
- 2. Վարդանյան Էլմիրա Արմենի - աշխարհագրության բաժին, մագիստրատուրա 1-ին
կուրս,
- 3. Բարսեղյան Լուսինե Ավետիքի – քարտեզագրության և կադաստրային գործի բաժին, 3-
րդ կուրս:

Որոշումն անցավ միաձայն:

2. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ա/ ԼՍԵՑԻՆ – Պատմական և ռեգիոնալ երկրաբանության ամբիոնի վարիչ Է.Խարազյանի զեկուցումը
մագիստրատուրայի շրջանավարտ Տիգրան Հակոբի Շախբեկյանի՝ ասպիրանտուրա
ընդունվելու երաշխավորություն ստանալու համար տրված դիմումի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Պատմական և ռեգիոնալ երկրաբանության ամբիոնի մագիստրատուրայի շրջանավարտ
Տիգրան Հակոբի Շախբեկյանին երաշխավորել ասպիրատուրա ընդունվելու համար:

բ/ ԼՍԵՑԻՆ – Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Ա.Ավագյանի զեկուցումը
մագիստրատուրայի շրջանավարտներ Տիգրան Արմենի Քեռյանի և Վարդան Լևոնի
Ասատրյանի՝ ասպիրանտուրա ընդունվելու գիտխորհրդի կողմից երաշխավորություն
ստանալու համար տրված դիմումների վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի մագիստրատուրայի շրջանավարտներ
Տիգրան Արմենի Քեռյանին և Վարդան Լևոնի Ասատրյանին երաշխավորել ասպիրատուրա
ընդունվելու համար:

գ/ ԼՍԵՑԻՆ – Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ
Թ.Վարդանյանի զեկուցումը մագիստրատուրայի շրջանավարտ Ջոհրաբ Չավենի
Մուրադյանի՝ ասպիրանտուրա ընդունվելու համար տրված դիմումի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի մագիստրատուրայի
շրջանավարտ Ջոհրաբ Չավենի Մուրադյանին երաշխավորել ասպիրատուրա ընդունվելու
համար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Մ.Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ԶԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.Ս.ՍԱՐԴԱՐՅԱՆ